

**Հայ գրականության օլիմպիադա-2017**

Մարգային փուլ

**IX դասարան - պատասխաններ**

1. Ասույթի հեղինակը Դերենիկ Դեմիրճյանն է:

Էպոսը(դյուցազնավեպը) վիպական բնույթի բանավոր մեծածավալ ստեղծագործություն է, որը ձևավորվում է տարբեր ժողովուրդների ստեղծագործական ուժերով՝ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող պատմական ժամանակաշրջաններում և ներկայացնում է ժողովրդի հավաքական մտածողությունը, ազգային բնավորությունը, կենցաղը, բարքերը, լուսավոր ապագայի անխախտ հավատը: Էպոսի գլխավոր հերոսը գերբնական ուժով օժտված ազնիվ ու արդարադատ մարտիկն է:

Մեր ժողովրդի Էպոսը ստեղծվել է VIII-X դարերում, երբ հայ ժողովուրդը ազգային-ազատագրական պայքար էր մղում արաբների դեմ. Սակայն նրա արմատները մխրճված են վաղնջական ժամանակների խորքերում, առասպելական ու պատմական զրույցներում: Այս դարերում է վերջնականապես ձևավորվել, որովհետև հայ ժողովուրդը վերակերտեց իր թագավորությունը՝ Բագրատունիների հարստության հաստատմամբ. Սկսվեց խաղաղ կյանքի հարյուրամյա ժամանակաշրջանը, և մեր ժողովուրդը անմահացրեց իր անձնուրաց զավակների հերոսական կերպարները և հաղթական կռիվների արդյունքում վերականգնված պետականության կառուցումը:

Աշխարհի բոլոր ժողովուրդները ունեն Էպոսներ.

**Յունական՝ Իլիական, Ոդիսական**

**Վրացական՝ Վագրենավորը**

**Իրանական՝ Շահնամե**

**Ֆրանսիական՝ Ռուանդի երգը**

**Գերմանական՝ Նիբելունգների երգը**

**Կարելաֆիննական՝ Կալեվալա**

**Իսպանական՝ Երգ Սիդի մասին**

**հնդկական՝ Մահաբհարաթա, Ռամայանա**

Էպոսների միջազգային մրցույթը կայացել է 1964- ին. մեր Էպոսը զբաղեցրել է առաջին տեղը:

2. Հայ իրականության մեջ Վերածնության դարաշրջանի հիմնադիրը Մեծն Գրիգոր Նարեկացին է:

X դարը համարվում է Վերածնության դարաշրջանի սկիզբը, քանի որ հենց այդ դարում վերակերտվեց Հայաստանի թագավորությունը(Բագրատունիներ), կառուցվեցին բազում քաղաքներ ու եկեղեցիներ, ծնվեց «Սասնա ծռեր» Էպոսը, գրվեց մարդու փրկության և կատարելության խնդիրն սվիրված անզուգական երկը՝ «Մատյան ողբերգության» պոեմը, գրվեցին առաջին տաղերը, որոնք, այլաբանական իմաստը անտեսելու դեպքում, բնութագրում են բնության զարթոնքը, կնոջ գեղեցկությունը, տղամարդու առնական ուժը:

Գոհար վարդն վառ առեալ ի վեհից վարսիցն արփենից,  
Ի վեր ի վերայ վարսից ծաւալէր ծաղիկ ծովային:  
Ի համատարած ծովէն պղպըջէր գոյնըն այն ծաղկին,  
Երփին երփնունակ ծաղկին շողշողէր պտուղն ի ճղին:  
Նարեկացին ոգտագործել է այլաբանությունը:2

3.Առաւոտ լուսոյ Արեգակն արդա՛ր, Առ իս լո՛յս ծագե՛ա:  
Բղխո՛ւմն ի Զօրէ, Բղխե՛ա ի հոգւոյս, Բան քեզ ի հաճոյս:  
Գանձո՛ղ ողորմութեան, Գանձի՛դ ծածկելոյ Գտո՛ղ զիս արա:  
Դուռն ողորմութեան Դավանողիս բա՛ց, Դասեցո՛ վերնոցն:  
Երբեակ միություն, Եղելոց խնամող, Եւ ինձ ողորմո՛ւ:  
Չարթի՛ր , Տէր, Յոգնել, Չարթո՛ գթմբեալս՝ Չուարթնոց նմանիլ:

4.Հայ գրականության մեջ կնոջ իրական գեղեցկությունը գովերգել է XVI դարի սիրո երգիչ Նահապետ Քուչակը: Նրան են վերագրվում միջնադարյան հայրենների մեծ մասը:

5. Օլիմպիադայի սիրելի՛ մասնակից. այս հարցի պատասխանը քո ստեղծագործական կարողությունների բացահայտումն է ակնկալում: